

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԳԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԳԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը : Ծա-
նոցման տողը 10 Սանդիս : Երկու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիս :
2 հրատարակուած չորս թիւերը եւ չորս թիւ :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԱՅՊԱՆԵԼԻ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

(Շարապ փարապի)

Լուսաւորչի կիրակի գիշերը Պուլկա-
րիոյ հայաշատ քաղաքներէն մէկուն մէջ
հարսնիք մը կը լլայ : Պատկազիր քահանայն
ըստ օրինի գաւաթ մը գինի օրհնելով՝ զայն
փետին, հարսին ու կնքահօրը ներկայացնելէ
ետքը, (որոնք մէջ մէկ քիչ խմելով՝ գաւա-
թին առկի պնակին մէջ դրամ կը ձգեն,)
գաւաթը՝ այն միջոցին կնքահօրը մօտ կեցող
երիտասարդ պարոնի մը կը ներկայացնէ :
Երիտասարդը գաւաթը ի մի ումայ կը պար-
պէ եւ պնակին մէջը կը դնէ, դրամի տեղ
ալ քաղաքապարտութեամբ « շնորհակալ եմ »
ըսելը չի մոռնալով :

Հարսնեւորք կը սկսին բարձրաձայն
խնդալ, իսկ տէր—պապային բերանը բաց կը
ձնայ՝ Ժողովելիք շարապ փարապին վրայ տու-
ած լլայուն, ու զգացած զայրոյթը զգուս-
րաւ զսպելով՝ պարոնը անկիւն մը կը տա-
նի ու կը սէ :

— Օ՛րհնած, ինչո՞ւ ամենը մէկէն
կը լլայցիր :

— Ի՞նչ ընելու էի .
— Անիկայ երեսում մը կը խմեն :
— Ես ալ մէկ երեսումէն խմեցի :
— Երեսում կըսեմ նէ՛ ստանկ պուտիկ
մը ըսել կուզեմ :

— Ներեցէք տէր հայր, երբ ինծի
գաւաթ մը գինի կը հրամայէք, ես գոյն
խմելովս յանցանք մը գործած չեմ ըլլար .
ասկէջ զատ, կընտրեմ նորէն գաւաթ մը գինի
բերել տալ :

— ԶԼլար, գինին մէկ անգամ կ'օրհ-
նուի :

— Ուրե՞մն . . .

— Չե՞ս գիտեր թէ հարսնիքներու մէջ
այս օրհնակ գինին մէջմէկ պուտիկ կը խմեն :

— Չե՞ր այդ ըսածը հին աստուծոյ
կընեն եղեր, հիմա աստուծոյ բան չի կայ :

Տէր պապան՝ միտքէն « Աստուած հոմ-
բերութիւն տացէ, նղովից ծնունդ », ըսելով՝
կառնէ կը քալէ խիստ զայրացած :

Տէր հայրին խորհուրդ կու տանք որ՝ այդ

Հարապ փառասի անունով հարսնեւորներէ
չդրամ ժողուելու այսանելի դրութիւնը որ
ուրիշ տեղերէ շատեց վերցած է՝ ինք ալ
վերցնէ. ատենօք իրենց նախորդները (տէր
պապաները) սգէտ ժողովուրդին դէմ ու-
ղած մանօվրաներնին կը դարձնեն եղեր ան-
արգել, բայց արդի ժողովուրդը զարգացած
է, պատանին անգամ գիտէ որ Պսակի խոր-
հուրդին մէջ գինի պտտցնելու կանոն մը չի
կայ, թէ քրիստոս կանա—Գալիլիացւոց
հարսնիքին մէջ գինին չի ծախեց և մեր տէր
պապին ընել ուղածին պէս 70—80 բե-
րաններ չի տարաւ չի խօթեց գաւաթ մը գի-
նին: Ու շիտակը՝ շատ զղուելի և ամեն ըս-
տամբքսի ընդունելիք բան չէ 70—80 բե-
րաններ մտած թուրոտ գաւաթէ մը գինի
կամ ջուր խմելը. և ահա ասոր համար է որ
շատ անգամ հարսնեւորք աստ անդ կը փախ-
չտին:

Ալ պէտք է գիտնան տէր պապաները՝
թէ այս և ասոր նման արարքներնուն պատ-
ճառան է որ ժողովուրդը հետզհետէ ի-
րենցմէ կը պաղեցնեն:

ՏԵՂԻՈՅՍ ԱՂՔԱՏԱԽԱՄԸ

Աւ Հայ երիտասարդս.

Ցաւ ի սիրտ ստուգեցինք թէ Աղբատա-
խնամ ընկերութիւնը առ ի չգոյէ դրամի՝
քանի մը օրէն պիտի դադրեցնէ իւր նպաստ-
ները, որով թէ՛ քիժօէ առաւպեալ խել մը
աղքատներու վիճակը աւելի պիտի ծանրա-
նայ եւ թէ անկարները անօթի պիտի մնան:

Ուստի, Դուք, ո՛վ Հայ երիտասարդներ,
ձեռք ձեռքի տալով շուտափոյթ թատերական
երեկոյթ մը և կամ դաշտային հանդէս մը
կազմակերպեցէք, որպէս զի Աղբատախնա-
մը իր ահամայ տուած որոշումը գէթ ժա-
մանակ մը ևս չի գործադրէ եւ առողջանա-
լու վրայ եղող աղքատ հիւանդները առանց
դարմանի չի մնան:



ՏԵՍԷՔ ԻՆՉ ՄՆԱՑ

Անմահ հայրենհաց
խեղճուկ զաւակներ՝
Ցիր ցան բաժնուած՝
Մայրերնին մոռցեր.
Չորս հազար աարուան
Ոսկերք մերազնեայց՝
Հընչեն և գողան
Յահագին շիրմաց.
Հառաչք մեր վեհ հարց,
Պահանջք իրաւանց,
Մեզ համար քաջաց
Արեամբ ըստացած
Ընչից և փառաց
Արդեօք ի՞նչ մնաց:

Սոսկամ յիշելու,
Դողամ ըսելու՝
Որ իւր ասպարէն
Յետ յետ ընկրկած
Հայն՝ որ էր սովորած
Ապրելու ազատ՝
Այսօր օտարէն
Ընկճած, զարնուած.
Ի սուգ տըխրամած
Ստիպեալ հեծել՝
Հապար իւր փառքեր
Փութայ թէ գտնել.
Իսկ այն ժողանգաց՝
Տեսէք ի՞նչ մնաց:

Ահ, աւա՛ղ հայուն,
Դեռ չէ ըզբացած՝
Որ անմիութիւն
Իւր տուն տապալած.
Գէթ մի օր, մի օր
Մըտքէն չէ անցած՝

Չար ատելութեանց
Արդեօք ի՞նչ շահած .
Շղթայ գէրութեանց
Նուաստ խոնարհած՝
Եւ ի նոյն վիճակ
Հրպատակացած ,
Իսկ վատ բաժանումն
Դարձեալ չէ թողած ,
Հա՛յ , քու աչերդ բա՛ց ,
Տե՛ս թէ ի՞նչ մնաց :

Սե՛ւ հագեր Մասիս,
Սուգ առեր Տիգրիս ,
Մայր Հայաստանեայց
Արցունք թափթփած ,
Բարեւոն կանգնած
Թըշնամին կատող՝
Արիւն մեր եղբարց
Ծըծած կշտացած .
Երկիրն կործանուած՝
Ոգինիս մարած .
Հա՛յ , քու աչերդ բա՛ց ,
Տե՛ս թէ ի՞նչ մնաց .
— Թշուառութիւն
Եւ կոտորած : —

Արի՛ք ո՛ հայեր ,
Տեսէք գերապանծ
Մայր Հայաստան մեր
Ահա գրկաբաց
Կարգայ հըրաւեր
Առ գունդ որդեկաց .
Օ՛ն , բանանք ձեռքեր ,
Զանք սէր իրերաց ,
Պարզենք դրօշներ
Սիրուն Հայրենեաց՝
Որ Ոգւոյն բերնով
Մեզ կոչէ վառուած .
« Հա՛յ , քու աչերդ բա՛ց ,
Գիտե՛ս , ի՞նչ մնաց .
Առանց միութեան ,
Առանց քաջութեան
Ձի՛ք քեզ վերադարձ :

Ն. Գ.

ՔԱՐՈՋ

Վասն ի վերուստ միութեան զՏէր ա-
ղաչեսցուք :

Վասն հարուածելոյ զանմիաբան կու-
սակցութիւնսն զՏէր աղաչեսցուք :

Վասն ոչ բազմացուցանելոյ վիշտսն հա-
յոց զՏէր աղաչ՝ :

Վասն անկարող լինելոյ կուսակցութեանց՝
միութեամբ կոտորել զազգն մեր զՏէր աղա-
չեսցուք :

Վասն ի վերուստ ուղարկելոյ դաւա-
ճանս բազումս զՏէր աղաչեսցուք :

Վասն ի վերսւստ ուղարկելոյ դրամս
բազումս զի պարարտացուցէ գրպանս դա-
տարկաշրջելոց զՏէր աղաչեսցուք :

Վասն չանկանելոյ ի ծուղակս մերայնոց
տոլանտրճոց զՏէր աղաչես՝ :

Վասն յաւէտ խայտառակ չլինելոյ ըզ-
Տէր աղաչես՝ :

Եւ ևս միաբան և սուտ խոստմամբ կը-
լանել դրամս եւ պատճառ լինել բանտար-
կութեան անմեղ ժողովրդին՝ համբաւ առ-
նելով հայրենասիրի՝ զՏէր աղաչես՝ :

Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ
ննջելով առաւօտուն հասանիլ ի նաւահան-
գիստն ազգակործանութեան ի Բարիվէ խըն-
դրեսցուք :

Զհրեշտակ միաբանութեան պահապան
դրամոց մերոց ի ժընէվէ խնդրեսցուք :

Զսրբոյ դրամին մեծ և կարող զօրու-
թիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Լոն-
տոնէ խնդրես՝ :


Զանձինս մեր և զմիմեանս պաշտելով
պաշտեսցուք .

Ողորմեաց Տէր ազգիս հայոց , ասաս-
ցուք ամենեքեան միաբանութեամբ , տէր ու-
ղորմեա , տէր ողորմեա , տէր ողորմեա ,

Տե՛ս զաղատիչսն հայոց և ողորմեա :

Օսա—Բազարաս





ԺԱԳ ՊԱՌՊՈՒ

ՆԿԱՐԻՉԻՆ ՀԱՇՈՒՅՑՈՒՑԱԿԸ

Յամի Տեառն 1710ին Գաղիոյ Պառվի-
լի եկեղեցիին ժողովրդապետը Ժաֆ Պառպու-
անունով նկարիչ մը կանչելով, եկեղեցիին
պատկերները անոր կը յանձնէ աւրուած-
ները շտկելու նորոգելու համար:

Նկարիչը պէտք եղած նորոգութիւննե-
րը ընելէ ետքը, պատկերները վերադարձու-
ցած ատեն՝ հետեւեալ հետաքրքրական հաշ-
ուեցուցակը կը ներկայացնէ

Տասնաբանեայ պատուիրանքներուն սըր-
բադրութիւնը. 3 Լ. 2 Սօլ:

Պիղատոսը գեղեցկացուցի և գլխարկին
վրայ ժապաւէն մը դրի. 3 Լ. 6 Սօլ:

Բարի աւագակը իր խաչին վրայ կա-
պեցի և նոր մատ մը դրի. 1 Լ. 10 Սօլ:

Գաբրիէլ հրեշտակին ձախ աչքը փո-
խեցի և ոսկեզօծեցի. 6 Լ. 8 Ս:

Պարտաւորեցայ Աստուծոյ բահանայա-
պետին աղախինը լուալ և դէմքին կարմիր
քսել. 4 Լ. 10,

Երկինքը նորէն շինելով երկու աստղ
աւելցուցի, արեւը ոսկեզօծեցի և լուսինը
մաքրեցի. 7 Լ. 14:

Քաւարանին բոցերը արծարծեցի և մէկ
քանի հոգիները նորոգեցի. 5 Լ. 6:

Պարտաւորեցայ դժոխքին հօրը ար-
ծարծել. սանդարամետին նոր պոչ մը դրի,
ձախ ձեռքի ճանկերը նորոգեցի ու գատա-
պարտելոց տեղեր շինեցի. 5 Լ. 10:

Հերովդէսի զգեստին շուրջը ժապաւէն
մը քաշելէս ետքը երկու ահռան շինեցի և
մագերը շտկեցի 6 Լ. 5:

Ամսին կաշիէ վարտիքը կարկտեցի. 2:

Մաղքոսին ահանջը կտրող սուրին ե-
րախակալը կարմիր ներկեցի. 3 Լ. 12:

Պետրոսին ուրացումը իմացնող տը-
ղաղին պոչը շտկուեցի. 2 Լ:

ԱՄՈՒՄՆԱՑԱԾ ՄԱՐԴՈՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Ամսուան մը նոր փեսայ եղած ատենը.

— Ո՛հ, որչափ անխելք եմ եղեր որ
քանի մը տարի առաջ չեմ կարգուեր. ար-
բայութեան մէջ ապրիլ ուղողը ամուսնանա-
լու է եղեր:

Տարի մը ետքը.

— Փառք Աստուծոյ, զաւակ մը ունե-
ցայ. հայր եմ, ի՛նչ անուշ բան. սա ա-
մուրիները ի՛նչ խելքի կը ծառայեն չը գի-
տեմ. աշխարհի համը առած չեն. խոտի պէս
եկեր խոտի պէս պիտի երթան:

Երեք տարի վերջը.

— Ի՛նչ ապուր ուտելու կարգուեցայ
ողջ գլուխս աւետարանին տակը դրեր եմ.
չի կարգուելը խելացութիւն է եղեր. մե՛ղք
որ չեմ գիտցեր:

Հինգ տարի ետքը.

— Պատճառ եղողին ճիտը տակը մնայ
որ ես ամուսնացայ. ասիկայ կեանք չէ՝ այլ
դժոխք. կինս այս օրերս այն տատիճան նա-
խանձուս մըն է եղած՝ որ անտանելի է:


Տասը տարի վերջը.

— Ա՛լ դիմանալու կարողութիւն չու-
նիմ. Աստուած իմ, հոգիս ա՛ն որ ազատիմ.
կարգուիլը՝ կրակէ շապիկ է եղեր. եթէ ան-
գամ մը բաղդս յաջող երթայ ու կնկանս բան
մը պատահի, մեղայ որ նորէն կարգուիմ:

Պատժական տոննի մէջ,
 Նախագահ՝ վկայութեան համար կան-
 չուած գեղատի սպասուհիի մը .

— Գիտցածդ ըսէ :

— Տէր նախագահ, կարել ձեռնել քիչ
 մըն ալ կերակուր եփել գիտեմ :



Փարիզի մէջ մանկամարդ կին մը առան-
 ձինն փողոցէ մը անցնելու պահուն՝ անծանօթ
 ու խռիւժ մարդ մը դէմը կեղնէ, ու կնկոյս
 քծնիլ եւ կնոջ հետ իյնալ :

— Անգին կորսուէ՛, անպիտան, կը պո-
 ռայ կինը, չե՞ս խպնիր, տարիքիդ կը վայլէ՛-
 սըվոր նայեցէք . . . երիտասարդ ըլլայ գոնէ . . .

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՄԸ

Մարդու մը տարիքը ու ծնած ամիսը
 գտնել կարելի է հետեւեալ կերպով .

Նախ կը պատուիրէք իրեն՝ գրելիքը ձեզի
 չի ցուցնել . ապա կառաջարկէք նշանակել
 տարւոյն բանիւրորդ ամսոյն մէջ ծնած ըլլալը
 ու զայն 2ով բազմապատկել կուտար . ար-
 տադրեալին վրայ 5 ևս աւելցնել տուէ հո-
 քը 50ով բազմապատկել տուէք . իր ունե-
 ցած տարիքը զոր ինքը գիտէ, անոր վրայ
 բարդել տուէք, այն ատեն ամբողջ գումարը
 հարցուցէք, զոր պէտք է ճշգրութեամբ ըսէ,
 և որմէ դուք ալ 250 պիտի գեղչէք :

Ենթադրելով որ 30 տարեկան է այն
 անձը և Գեկտեմբերի մէջ ծնած՝ գործողու-
 թիւնը սապէս պիտի կատարուի .

$$12 \times 2 = 24 + 5 = 29 \times 50 = 1450 + 30 = 1480$$

Հիմա, այս 1480էն պիտի գեղչենք 250ը,
 որով կը գտնենք 1230 . այս գումարին վեր-
 ջի երկու թիւերը կը ցուցնեն մարդուն տա-
 րիքը, այն է 30, իսկ առաջին թիւերը՝ Գեկ-
 տեմբերը, որ տարւոյն 12րդ ամիսն է : Հե-
 տեաւարար գրողին կը յայտնենք թէ 30 տա-
 րեկան է և Գեկտեմբերի մէջ ծնած :

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Էջի ահապար

Հաճի աղա կէօղլէրինին հալինտէն աննա-
 շըլըեօր քի պու կէճէ րահաթըղը ըմլըսըն :

— Պրահ արգատաշ, բիրէ վէ թահ-
 թա գուրուսունտան ոչուտուղում հօք քի ,

— Բիրէ թօղու վար, օնտան ալսա՞նա .

— Ալտըք ամա՛ հիչ պիր ֆայտա կէօ-
 րէմէտիք :

— Աղ էքէրսէն՝ ֆայտա կէօրմէզսին .
 իշիթտիղիմէ կէօրէ, ագալի եարըմ արշըն էն-
 ըլիկինտէ էքմէլի իմիշ հաթաղըն տէօրթ էթ-
 րաֆընա :

— Եարըմ արշըն թօղ էքմէք իշիւն
 աղտան աղ պիր քիլօ ալմալը . քիլօսու 4 ֆը-
 րանգ ըմլը :

— Նէ՞ հաբասըն, րահաթըղըն իշիւն
 ալաճագսըն :

— Պէն կէճէլէրի 4 ֆր. թօղ փարասը
 վէրէճիմէ, պիր ֆնանգ վէրիր իսթէտիղիմ
 հօթէլտէ հաթարըմ :

Մարտիկ աղա, էվլէնտիղին վագըթ
 գա՞ջ հաշնտա իտին :

— Ինանրսան՝ պիլմէմ, չիւնքի օ վտգթ
 ագըլ հօք ըտը պաշտա :

Կայէթ գումարպազ պիր տօգթօր՝ տալ-
 կըն պիր հալտէ՝ թէտավի իթմէքտէ օլտուղը
 պիր հասթանըն նապղընըն աթըշընը սայա-
 րաֆ՝ շէյլէ տէմիշ .

— Ալթը, եէտի, սէքիլ, տօգուզ, օն-
 պաճագ, գըլ, թահլը, ասօ՛, բառօլի :



ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

ՊԱՐՏՔ ՀԱՏՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ ՄԸ

Առնելիքներն ու ձեռքէն շատ նեղը մնացած խմբագրի մը բեղմնաւոր ուղեղին մէջ վերջապէս հանճարեղ գաղափարի մը լոյսը կը ճառագայթէ:

Ինչ ընէ անոնց ձեռքէն օձիկը փրկելու համար:

Իսկոյն գաւառային քաղաք մը կը մեկնի և անկից՝ իր մահը գուժող հեռագիրներ կը բաշէ քանի մը լրագիրներու:

Ընդհանուր ցաւով կընդունուի տխուր լուրը: Քանի մը պաշտօնակիցներ ներփող մը կը հրատարակեն իր տաղանդին, այլք արցունք մը կը թափեն անոր յիշատակին, և խնդիրը մոռցուելով, աշխարհ իր սովորական ընթացքը կը շարունակէ: Իսկ պահանջատէրները շահ ու զէնի կողմը կանցնեն այս հաշիւը:

Այս նպաստուոր պարագայներէն օգտուելով, մեր խմբագիրը քիչ յետոյ քաղաք կը վերադառնայ, հաճոյքով ըմբոշխնելու հանդարտութեան այդ օրերը:

Բայց եկու տես որ, օրին մէկը, փողոցին մէջ յանկարծ դէմ դիմաց կուգայ իր պարտապահանջներէն մէկուն, ամենէն կատաղիին, որ զայն կը ճանչնայ:

— Ա՛ս ի՞նչ է, կը գոչէ պահանջատէրը, ձեզի գերեզմանատունը կը կարծէի:

— Չէք սխալած, կը պատասխանէ խմբագիրը, առանց պաղարիւնութիւնը կորսնցնելու, եւ այնպիսի ձայնով մը որ կարծես անդիի աշխարհէն կուգար, չէք սխալած, արգարեւ երեք ամիսէ ի վեր հոն եմ. բայց որովհետեւ օգը գեղեցիկ էր՝ այսօր հրաման ստացայ քիչ մը շրջագայելու, խոստանալով ժամը երեքին վերադառնալ. պատիւ ունիմ ձեզի ողջունելու:

Եւ խմբագիրը, կրնակը դարձնելով, ուրուականի քայլերով կը հեռանայ խեղճ պա-

հանջատէրէն, որ ապշութենէն և սոսկումէն բարացած էր, և որ գուցէ անշարժ կը մնայ մի եւ նոյն փողոցին մէջ:

0.



Երկու Բարեկամներ.

Չորեքշաբթի օրուան «Իրաւունք»-ը կարդացիք:

— Այո՛.

— Հայ յեղափոխականները Պոլսոյ մէջ Տօքթ. Գարագաշեանէն սպառնալիքով դրամ ուղեր են, տօքթօռն ալ կառավարութեան իմացուցեր եւ այս պատճառաւ շատ մը հայեր ձերբակալուեր են եղեր:

— Այդպէս է:

— Բայց սա չկրցայ հասկնալ թէ՛ որ կուսակցութեան կը պատկանին եղեր այդ բանը ընողները:

— Վերջերս կիրակի օր մը Վառնայի Եկեղեցւոյն բակին մէջ «Յեղափոխական գործիչները գէշ մարդիկ են, պէտք է ամենքն ալ հեռացնել» պոռալով մեղայի եկող եւ միութեան փափաքող կուսակցապետի մը վերակազմեալ կուսակցութեան պատկանող պարոններ:

— Բայց այս ըրածնին՝ իրենց մեղային հակառակն է. ժողովուրդը խաբել ըսել է:

— Ինչպէս որ կ'ուզես՝ անանկ հասկցիր:

— Եւ կարելի՞ է որ ասանկներով՝ բաղձացեալ մաքուր միութիւնը գոյանայ:

— Ինչո՞ւ կարելի չըլլայ:

— Բայց, ե՞րբ կարելի կրնայ ըլլալ:

— Երբոր ձուկը ծառը ելնէ:

Բեբրոնիկ հանրմ, աղջիկդ կարգեր ես
եղեր, լսեցի նէ շատ ուրախ եղայ :

— Շնորհակալ եմ :

— Ան չէ ամա՛, փեսայդ նէճի՞ է :

— Առաջ խառա խոլյուժի էր ամա՛
հիմա հազրճի է :

— Ի՞նչ ըսեմ, Աստուած համբերու-
թին տայ, մէկն ալ մեր գլուխն է :

— o —

Միւսիւ լեւոն, Ժամը քանի՞ն է .

— Չորս ֆրանք տաս նէ կըսեմ :

— Ա.տ Ի՞նչ ըսել է .

— Ժամացոյցս 4 ֆրանքի տեղ ռէնիւն
դրած եմ, երթամ պիտի առնեմ ըսել է :

— o —

Պիր ափօգաթ օտարոնտա

Տափանըղ նէ՞ տիր .

— Թիյզէմին օղլունտան 40 ֆրանք
խթէրիմ, պիր տիւրլիւ վէրմէյօր :

— Պօշ շէյ :

— Նէտէ՞ն պօշ շէյ օղլուհօր :

— Այլպ տըր . 40 ֆրանք իչիւն
թէյզէ օղլունըն ալէյ հինէ տափա աջմագ սա-
նա հագըշըր մը :

— Նէ՞ եաբայըմ, օնտան հագըն ագ-
րապամ եօգ տըր :



Այցեատոմս, հասցեատոմս. նամակա-
դուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմ-
ոակ, հալլն հալլն թէ՛ պարզ և թէ՛
դսկիդօծեալ յէկ քանի գոյներով կը տը-
պագրուին : Քաղաքներէ եկած յանձնա-
բարութիւնք փութով կը կատարուին :
Գին գոհացուցիչ : Դիմել հաշիհի խըմ.
բագրութեան :

ՕԳՏԱԿԱՐ ԽԲԱՏՆԵՐ

Կաթը անաղարտ պահել .

Ամառ օրեր, առտուն առնուած կաթը
մինչեւ իրիկուն անաղարտ պահելու համար
մէկ քիլօ կաթին՝ մէկ կրամ բորական թը-
թու (ասիտ պօրիք) խառնելու է : Այս թը-
թուին ներկայութեանը կաթը չաւրուիր եւ
առողջութեան չի վնասեր :

— o —

Կարճատես դերձակներու համար

Դերձան անցուցած ատեն կարճատես
անձինք ասեղը ճերմակ նիւթի մը վրայ բըռ-
նելու են :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 17

Շինողը՝ կը ծախէ,

Գնողը դող ելնէ,

Գործածողը հոգը չընէ .

Ըսէ նայիմ, աս Ի՞նչ է :

—

Թիւ 18

Ներկային քով նստած տառ մ'եմ,

Գտիր գու գիտ՝ անունդ ըսեմ :

— o —


Թիւ 15 հանելուկն էր ՀՈՎԱՆՈՑ :

Թ. Թորամանեան :

Թիւ 16 հանելուկն էր ՍՈՒՆԿ :

Հրանտ Ալեանագ :





ՀԱՆԵԼՈՒԿ

ԱԶԴ

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը տպագրուի: Դիմել «Հայելի» խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմ՝ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակադրոշմ՝ կ'ընդունուի:

ՏՕՔԲ. Ե, ՓՈՎՄԱՍՆԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ վերագարձած է Սօֆիա եւ կընդունի հիւանդները ամեն օր իր տունը ի Պալլոգ Բազար, առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5: Զորեղաբարձի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5 ձրհապէս կը դարձանէ: 5—10

ԿԱԼՎԱՆԻՍԹ

ՕՆՆԻՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ամեն տեսակ տպագրական կազապորներ պատրաստող, նաեւ թէ անձնական եւ թէ առևտրական կնիքներ: Դիմել ի վարնա Զիլնկիրէր փողոց թիւ 561:

Գին գոհացուցիչ:

3—12

ԳՈՐԾԱԿԼՈՒԹԻՒՆ

Ռուսձուգ	Տիարը Եղբարք Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար Երթաքի Սարգսեան:
Հսւմլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօֆիա	Յակոբ Դերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատուր:

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница „Взаимность“ — Варна.